

դիտարկում են այդ ստորակները աստուածները աս-
ման մի կարիքում—թէն գիտեն յարաբար յա-
ճախութեամբ տուածները բազմապատիկ ստա-
նալ:

Ուրեմն Ուզունարի համար գործել ցանկացու-
ղին—ցաւակցողին պակասում է մի ամենազ-
խաւոր միջոց—դրամ: Մենք զայրանում ենք երբ
տեսնում ենք, որ բողոքական միսիոները, անդրա-
կեանքան եղբայրները որում է մեր ազգի էութիւնը
կազմող գիւղացւոյն—բայց չենք մտածում ինք-
ներս գործել նոյն իսկ մեր օգուտին, տարածելով
նրանց մէջ դէժ՝ ազգային ինքնաճանաչութիւնը,
հայրենական անոնք... Ամօթ է նախատիւնը մեր
մուտայ խորում արեղանքներն. այլ ևս ինչնեղուս
են պէտք—կարծեմ որ միայն աղօթքներով ժո-
ղովրդին օգնելու դարձ անցել է, այժմ գործ է
հարկաւոր. թող Ուզունարի վանքին պատկա-
նակ «Մարա» անուն գիւղի կալուածքի եկամու-
տով դրանք իրանց փոքրը հաստացնեն չը
խղճահարկելով որ՝ Ուզունարի մանկտին դուրի
ուսումը, դուրի մարդ զաւանուլու յոյսից աճում է
ապականիւթ ապագայի համար. այս մասին ու-
րիշ անգամ:

Նկարագրելով Ուզունար գիւղի դրութիւնը ոչ
այնքան սև գոյներով, որքան նա է, հարկաւոր
էինք համարում զմեզ մի համեստ միջոցի: Ար-
դեօք հնարաւոր չէր Բագուի Մարգարիտական
ընկերութեանը, կամ թիֆլիսի Բարեգործական
ընկերութեանը իրանց հովանաւորութեան ներքոյ
աւանդ աղքատ Ուզունարի քայքայված դրու-
թեան ուսումնարանը, ծախսելով մի 2—300 ր.
իրեն մի համեստ վարժապետի ուսման, որի բնա-
կարանը, ուսնաւորը և վարձը կը հոգար հիւ-
րանքը Ուզունարը: Այսպիսի մի արժանաւոր բա-
րեգործութիւն կարող էր գործել և մեր հարուստ-
ներից մէկը:

Իսկ առաջինները գործելով մի այսպիսի բա-
րութիւն, յախտնական բարի յիշատակի արժանի
կը լինէին յանձնած լինելով իրանց ձեռքի հա-
ցակտորը—իրանց ամենաքաղցած եղբորը և բարի
սերմը կաճէր ու կը բարձրանալէր: Այս տարուայ
կաշաւը զգալի մեծաւ հասցրուց հայաբոյսերին,
ցորենը կը թանգանայ. առ այժմ պուրը 1 ր. 20
կօպէկ է, 6 շառ ձու 5 կօպէկ, խլիլ ֆունար 30
կօպէկ:

Մեր իննամեայ յաճախ, բայց անհետանք
խղիւղաւորութիւններից յետ իշխանութեանը—վեր-
ջապէս վերջին օրերս եկաւ մեզ մօտ առանձին
յանձնարարութեան շնորհիւ վախճանի մի հա-
մարիւրի և շիտակ խլիլ. տեսնենք հետեանքը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 23 օգոստոսի

Ձեր լրագրի 152 համարի մասը լուրերի բաժ-
նում կարգացնել հետեան լուրը. «մի պարոն
Հաւաքարի ս. Լուսաւորչի եկեղեցու գաւթում,
տօն օրերին, առանց իրաւունքի, բարեգործական
նպատակով ժողովրդից հաւաքում էր փողեր, և
այդ ժողոված փողերը մինչև օրս յայտնի չէ ին-
չի վրա գործարկեցան և այլն»:

Ուստի, յարգոյ խմբագիր, խոնարհաբար խնդ-
րում ենք, արդարութեամբ պահպանելու համար,
այս երկուող նամակին տեղ տալ ձեր պատուա-
կան «Մշակ» լրագրի մէջ:

Մենք ներքոյ ստորագրողներս հրապարակա-
յայտնում ենք, որ ոչ մի պարոն չէ եղել Հա-
ւաքարի ս. Լուսաւորչի եկեղեցու գաւթում, «ա
ռանձնապէս», «առանց իրաւունքի», փող ժողո-
վելիս թէ տօն» և թէ հասարակ օրերում, այլ
միշտ եղել ենք թէ փող ժողովելիս, և թէ մոմ
վաճառելիս, հինգ կամ վեց հոգի միասին: Լու-
սաւորչի առաջի տօնին ժողովել ենք 17 ր. 67
կ., երկրորդ տօնին 2 ր. 20 կ., երրորդ տօնին
2 ր. 70 կ.: Ընդամենը քսան երկու բոլոր յիշու-
նը եօթը կօպէկ:

Վերոյիշեալ 22 ր. 57 կ.-ը միւս ժողոված փո-
ղերի հետ (որովհետեւ առանձին էր փող է ժողո-
ված եկեղեցու գաւթում) նոր քաղցիկի ուսում-
նարանի համար) գործ է զրկել ուսումնարանի
կան-կարասիքի և սենեակների վերանորոգու-
թեան համար, որի հաշիւը արդէն ուղարկված է
«Մեղու» խմբագրութեանը տպագրելու համար:

Հաւաքարի ս. Լուսաւորչի եկեղեցու երեցի-
կան Զարեմի Երանանց, Պետրոս քահանայ

Երանանց, Հաւաքարի Գեորգ Թարխանեանց,
Գեորգ Նազարեանց, Աղասի Մէլիք-Ալիաղան և
Բաղդասար Զարդեղեանց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, օգոստոսի 24-ին

Պատուական լրագրի 147-երորդ համարում
Անայցիտայից հաղորդված լուրերի կարգում պ-
րատուն հաղորդում է թէ. բարեկրօն Գաւթի ա-
ռաջ քահանայ Երանանցի գաւթով զննել երեց-
իկոսան Վանդեանի գործոց, իբր մի օր մնաց
այնտեղ և 150 բոլոր եկեղեցական փողերից հա-
նապարհաճախ ստանալով, վերադարձաւ: Այս
լուրը պարունակ բոլորովին սխալ է հաղորդել չը
զիտեմ ինչից ստիպված, երեկ չը հասկանալով
լրագրութեան յարգը և պատիւը, ապա թէ ոչ
կարող էր երեցիկոսանի պաշտօնակատարներից
ստուգել, որոց գրասենեակից մի ժամ հեռանալ
իրան համար մի մեծ կորուստ է համարում,
կամենում եմ ասել, առաւօտից մինչև երեկոյ
այնտեղ անգործ վայր ընկած է. այսպիսի դեպ-
քում և հանգամանքների մէջ սխալ լուր հաղոր-
դելն անհերքելի է: Յիշատակաւ Երանանց ա-
ռաջ քահանայ մնաց այնտեղ երեք թէ չորս օր,
տեղական հոգևոր կառավարութեան և հաշուե-
տանների հետ, որոց մէկն ևս պ. լրատուն է,
միակամ խորհրդով արեց այն, ինչ որ հնարաւոր
և կարելի էր. ի՞նչ պարունակ անգործ էր նրա գոր-
ծողութիւնից, կարող էր չը ստորագրել արձա-
նադրութիւնների տակ և կարող էր իր դժգոհու-
թիւնը բողոքագրով յայտնել, ուր հարկն էր:

Գաւթի առաջ քահանայ ստացաւ եկեղեցա-
կան գումարից միմիայն մի հարիւր րուբլի,
որպիսի գումարը ուժի տարի առաջ նախկին ե-
րեցիկոսան Բաղդասարեանից գործի զննութեան
գաւթեան ժամանակ ճանապարհաճախ արել էր
իր քսակից և տակաւին չէր ստացել. իսկ այժ-
ման ճանապարհաճախը նա ստացել է վրաս-
տանի և իմէրէթի կօնսուտորիայից 86 րուբլի
և ոչ թէ 150 րուբլ. որպիսի գումարը դեռ երեց-
իկոսանի պաշտօնակատարները չեն հասուցել
կօնսուտորիային: Գործի էութիւնը այս է:

Արքայաժ քահանայ Ղազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս 26 Օգոստոսի

Ձեր պատուական լրագրի 154 համարում կար-
գացի մէկ նամակ Ե. Մ. ստորագրութեամբ, որի
հեղինակը սաստիկ կերպով յարձակվում է մեր
թիֆլիսի օրիորդաց ուսումնարանների վրա, և մի
կողմը թողնելով նրանց տուած օգուտները, շատ
մութ գոյներով է նկարագրում նրանց: Պէտք է ա-
սած առ հասարակ, որ որպէս գովասանաց, նոյն-
պէս պարսաւանաց ծայրայեղութիւնը մարդուս
մէջ մէկ տեսակ կապվածած է յարուցանում նրա
հեղինակի դէմ: Նամակի հեղինակը սկզբում զը-
խաւորապէս յարձակվում է Նորաշէնի Մարիա-
ման ուսումնարանի վրա, որտեղ, իբր թէ, չնոր-
հիւ տեսի, չը կայ ոչ կանոն, ոչ կարգ և ոչ ա-
ռաջադրութիւն, այնուհետև յարձակվում է Գա-
յանեան և Յովնանեան օրիորդաց ուսումնարան-
ների վրա, որոնց պակասութեանց պատճառները
վերաբերում է աշակերտութեան ծնողաց:

Կարգաւոր այս նամակը և մի և նոյն ժամա-
նակ աչքի անցնելով Մարիամեան ուսումնարանի
առանձին տետրակով ամսոյս 4-ից տպագրու-
թեամբ հրատարակած հոգաբարձուների ստորա-
գրութեամբ համառօտ հաշիւը, եկայ ևս այն եղ-
րակացութեան, որ պէտք է հոգաբարձուների պաշ-
տօնական յայտնութիւններին աւելի հաւատաւ, քան
թէ այսպիսի անհիմն և առանց վաստերի զրկած
նամակին. մասնաւոր եր ևս անձամբ ճանաչում
եմ պ. տեսուչ Զաչիտեանցին և գիտեմ նրա ջը-
մանով գործունէութիւնը ազգային ուսումնարա-
նաց մէջ 1857 թուականից սկսեալ մինչև ցայսօր:
Այդպիսի չարախօսութիւնները, փորձով դի-
տելը, որ միշտ մնասում են գործին և կարողա-
նում են շատ պարզամտների մղորացնել և ազ-
գային հաստատութեանց թուլացնելու պատճառ-
ներ տալ:

Հոգաբարձութեան հաշիւը պարզ երևում է,
որ պարոն Զաչիտեանց իր տեսլութեան սկսած
օրից մինչև ցայսօր կատարած է բարեխղճարար

իր պաշտօնը և արժանացած է ընդհանուր շնոր-
հակալութեան ուսումնարանի առաջադիմութեան
համար, և մի և նոյն ժամանակ հոգաբարձու-
թեան թախանձանքը յետ է առած իր հրաժարա-
կանը և նորից յանձն է առած շարունակել իր
պաշտօնը, և թէ լրագրութեան միջոցով Զաչի-
տեանցի դէմ առաջացած բողոքները բարձրացած
են մի երկու վարժապետի և նրանց մի քանի
կուսակիցների կողմից, այն օրից, երբ այդ պա-
րոնները թողել են Մարիամեան ուսումնարանը,
չը կարենալով տանել պ. տեսչի օրինաւոր և ի-
րաւացի պահանջները:

Ես իմ կողմից խորհուրդ կը տալի այդպիսի
յօղաւաճողներին անձնական կրթելով չը յարձակ-
վի այս կամ այն հաստատութեանց և նրանց դե-
կաւորողների վրա, իսկ՝ զեկաւորողներին չը
յօղաւաճուի և իրանց գործը տանել առաջ ան-
վրդով ամենայն ջերմութեամբ:

Կ. Տէր-Գաւթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 27-ին օգոստոսի

Խնդրում եմ ձեզ տպել որքան կարելի է շուտ
հետեան հերքումը:

«Մշակի» № 156 լուրերից մէկին մէջ առած է
իբր թէ պ. Ս. Մանդինեանը ուսուցչական ժողո-
վի մէջ զիմեղով իրան նկատողութիւններ անող
իր վաղեմի աշակերտին—այսինքն ինձ—ասեց՝
«դուք իր աւուսնը չուէք նկատողութիւն ա-
նելու, քանի որ իմ աշակերտս էք եղել»:

Ի հարկէ պ. Ս. Մանդինեանը կարօտ չէ իմ
թիւլ պաշտպանութեան առհասարակ և մանա-
ւանդ այն պատճառով որ մեր խօսակցութիւնը
եղել է ահալին բազմութեան ներկայութեամբ,
բայց նրան չը ճանաչողներին համար կասեմ միայն
այսքանը, որ նա երբեք իրան թիւլ չէր տալ անել
այդպիսի կոպիտ անտակալութիւն:

Նա յայտնեց ինձ իր ցանկութիւնը շատ հա-
մեստ կերպով և իբր իր մօտիկ բարեկամին, իսկ
ի՞նչ ևս չը համակրեցի այդ ցանկութեան—այն
էլ ոչ այնպէս կոպիտ, ինչպէս նոյն լրի մէջն է
գրած—այդ ամենին չէ նշանակում թէ դուրս
եկաւ մի չանձուռնի վէճ, որի համար անհրա-
ժեշտ լինել մինչև անգամ նախադասի միջնորդու-
թիւնը...

Եթէ իմ բազմաբախտ և յարգելի ուսուցիչ պ.
Ս. Մանդինեանը, որի անունով ևս միշտ պարծե-
նում եմ, ինձ անձամբ յայտնած չը լինէր (աչքի
առաջ ունենալով իմ տաք բնաւորութիւնը) թէ
ամենին վերաբերված չէ ինձանից, ևս պատ-
րաստ էի ներողութիւն խնդրել նրանից նոյն իսկ
ամբողջ ուսուցչական ժողովի առաջ:

Բայց դիտութեան մէջ վիճաբանել մէկին հետ և
զիպչել նրա անձնականութեան, բոլորովին հա-
կառակ բաներ են:

Տիգրան Փրոյմանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի, օգոստոսի 26-ին, առաւօտեան,
Գալանեան հայ օրիորդաց ուսումնարանի դա-
ւիճում ընդհանուր հայ ուսուցչական ժողովի ա-
ռաջ պ. Կ. Թէմուրաղեանց փորձական դաս խօ-
սեց թուրքալեզուներից: Ներկայ էին համարեա
բոլոր ուսուցիչները և շատ ուրիշ անձինք: Պ.
Թէմուրաղեանը պարպեց առաջին բաժանման
աշակերտների հետ 1—10 թւերի վարժութիւննե-
րով: Գաւթեանութիւնը վերջացնելուց յետոյ տաք
բօլեղով ընդմիջում եղաւ, որից յետոյ տպիկցաւ
պ. Թէմուրաղեանի դասաւանդութեան ըննադա-
տութիւնը: Ուսուցիչներից խիստ շատերը արեցին
նկատողութիւններ և նրանցից մի քանիսները
մինչև անգամ մանրակրկիտութեան հասան. օրի-
նակ մէկը մեղադրում էր պ. Թէմուրաղեանցին,
որ նա պարպելիս աշակերտների հետ բաւական
ուրախ չէր և ժպիտ չը կար նրա երեսին և այլն:
Ապա պ. Մանդինեանը խօսելով և նոյնպէս ցոյց
տալով պ. Թէմուրաղեանի դասաւանդութեան պա-
սաւոր կողմերը, նկատեց այն ուսուցիչներին,
որոնք պ. Թէմուրաղեանի դասաւանդութեան մէջ
բացի պակասութիւններից և թերութիւններից
ուրիշ արժանատիւութիւն չէին կամենում տեսնել,
թէ աշխարհիս երեսին ոչ մի մանկավարժ չէք
գտնի, որ նա ձեռքը սրտի վրա դրած հասարակ-
նութիւնները սրբութեամբ և մանկավարժական
կանոններին համաձայն: Այդ վիճաբանութիւնն-

րից յետոյ խօսք տպիկցաւ պ. Թէմուրաղեանին,
որը սկսեց պաշտպանել իր դասաւանդութեան
եղանակը և պատասխանել իր ընդհանրանքին:

Գաւթեան ուսուցիչներից մինը խնդրում է
մեզ տպել հետեան: «Եթէ ընդհանուր ուսուցչա-
կան ժողովի անդամների բոլորի պատկերները ի
միասին պէտք էր դուրս բերել, միթէ պակաս կը
լինէին մեզանում, այստեղ թիֆլիսում, հայ լու-
սանկարները: Ինչի ուրեմն պ. Ա. Երեցեան ա-
ռաջարկեց անպատճառ յիմալով մօտ հանվել
իմ կարծիքով հայ լուսանկարներից կը գտնվէին,
որոնք մեծ ուրախութեամբ աւելի էժան յանձն
կառնէին հանել խմբապատկերը, իսկ դուցէ և
բոլորովին ձրի: Զարմանում եմ նոյնպէս հայ ու-
սուցիչների վրա, որ նրանցից ոչ մինը չառաջար-
կեց զիմեղ մի հայ լուսանկարիչ»:

ԵՐԵՆԱՆԻՑ մեզ գրում են: «Վերջին օրերս
կրկնվեցան մի քանի սպանութիւններ մեր նա-
հանգում: Այս օրերս Զօրաւոր եկեղեցու բակում
գտնվեցաւ մի երեխայի դիակ, երկու կտոր ա-
րած, միւս օրը երկու հայ երեխաներ կուռնով,
մինը միւսին վերաւորել է դանակով և վերաւոր-
ված միւս օրը մեռել է: Մի քանի օրից յետոյ
երեսնեց Թէմուրաղեանը տանող ճանապարհի
վրա սպանել են երկու ջրիչ: Նրանց սպանողնե-
րին, երեք թուրքերին, գտան և կալանաւորեցին:
Զարագործների գտնողը ինքն գաւառապետի օգ-
նական պ. Ղափլանօղլէն էր: Նոյն ճանապարհի
վրա նոյնպէս սպանեցին, ինչպէս պատմում են,
և երկու հայի: Ամսիս 14-ին Եղեւան գիւղում
սպանեցին մի երիտասարդին, Ստ. Զալայանց
աղաքանունով: Այն աստիճան վախճում են այժմ
մեզանում սպանութիւններից, որ այս օրերս,
երբ երկու հոգի անպայտ մարդիկ օր ցերեկով
փախցնել էին մի տանից երկու հատ պղինձ,
զողերին փողոցում տեսնողները, վախճալով
սպանվելուց, լուռ էին մնացել»:

Օգոստոսի 26-ին հայ թատրոնական խումբը
ներկայացում տուեց Արծրունու թատրոնում ի
պատիւ ուսուցչական ժողովի: Թատրոնը լի չէր:
Լուռ ենք որ կարգաւորի յանձնաժողովը դիւց
50 հատ բուլիւնոց տոմսակներ և բաժանեց
ձրիապէս ուսուցիչներին մէջ: Սեպտեմբերի 5-ին
նոյն խումբը կը ներկայացնէ նոյն թատրոնում
Սուրբուհեանցի «Պէպօ» պիէսան, դարձեալ ի
պատիւ ուսուցչական ժողովի:

ՄԱՆԻԻԻՍԻՑ մեզ գրում են: «Մեզ մօտ եկած
ժամանակաւոր հիւրերը, ամառայինը, արդէն
սկսում են կամաց կամաց քօչել այստեղից: Ցա-
ւում ենք, որ այս տարվայ ամառայինը, որոնք
մեծ մասամբ ունեւոր հայեր էին, անտարբեր
գտնվեցան դէպի մեր աղքատ, անախտանքի
դրութեան մէջ գտնվող եկեղեցին: Միայն ան-
ցեալ տարի տ. Երեցեան գտնվեցաւ այնքան բա-
րեւիտ, որ հանգանակութիւն բանալով և մի
գումար ժողովելով, բերել տուեց մի պատկեր և
եկեղեցու բնի համար»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են: «Օգոստոսի 19-ին
կը հասնի այստեղ նորին պայծառաւայտութիւն,
Կովկասեան կառավարչապետ, իշխան Կօնդու-
կօվ-Կօրսկով: Արդէն ամսիս 17-ին իշխանին
գաւառի սահմանի վրա ընդունելու համար ու-
ղեւորվելով դասաւանդութիւն պաշտպանաւոր Հա-
սանիկով և գնեիրալ Բէգօրաւորով»:

Նոյն տեղից մեզ գրում են հետեան: «Այս
տարի գարնան սկզբներում ցանքերը առատու-
թիւն էին խոտանում, բայց արդէն մայիս ամ-
սում եղած տաք արեւեկան քամիները սաս-
տիկ մեծացնելով թէ ցանքերին և թէ պտուղ-
ներին: Հունձը վերջնապէս յետոյ, ցորե-
նի դիւր յանկարծ բարձրացաւ մինչև 85 կօ-
պէկ պուրը: Ամսիս 7-ին առաջակները չորս
մարդ կան քաղաք և իրանց կաթով անձնատուր
եղան ուսուցիչներին: Այն պայմանով, որ ու-
սուցիչներին բարեխօսի իրանց յանցանքները
թիֆլեանցիւր համար իշխան Կօնդուկով-Կօրսա-
կովի առջէ»:

Մի ուսու պարոն խնդրում է մեզ տպել հե-
տեան: «Պատիւ ունեմ յայտնել հասարակու-

Թեանը, որ նախկին ֆոն-Վիլհելմի գրադարանը և ընթերցարանը անցաւ իմ ձեռքս և որ ես ամեն միջոցներ գործ եմ դրել որպէս զի կատարելապէս բաւականացնեմ բաժանորդներին: Իսկ ուսում առնողներին ես անում եմ հետեւել զիջումն. նրանք կարող են վերցնել զբերքը առանց գրաւականի, վճարելով 3-որդ բաժանման համեմատ, ամիսը 40 կոպէկ: Մի և նոյն ժամանակ կը նշանակվի աշակերտներին բնակութեան տեղը և այն դպրոցը, որտեղ նրանք ուսում են առնում: Յոյս ունեմ որ պատելի հասարակութիւնը առանց ուշադրութեան չի թողնի իմ գրադարանս և ընթերցարանս, որ հիմնաւորապէս վերանորոգված է: Ներկայ պայմաններին մէջ գտնվող իմ ձեռքս անցած հիմնարկութիւնը կարօտ է հասարակութեան պահպանութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Պորտ-Սայդից «Figaro» լրագրին հեռագրում են օգոստոսի 24-ից: Գնեւրայ Ուէլսէյ Արաբի-փաշայի զօրքերին սաստիկ հարուած հասցրեց: Երէկ հեծելազօրքի հինգ էակազօններ դուրս եկան Նեֆիշից և ուղեւորեցան դէպի Մակամ, մինչդեռ զնդապետ Ստեփէլ իր ծովային զօրաբաժնով անցնում էր Իզմիլիէի ջրանցքի աջ ափով, իսկ գնեւրայ Գրեմ հետեւում էր նրան իր հետ ունենալով հինգ բատալիօններ: Այդ զօրքերը բանակ դրեցին Բամ գետի մօտ երկաթուղու գծի և Մակամի լճի մէջ: Երկաթուղու գծի ուղղելուց յետոյ այդ զօրքերի հետ միացաւ Կոնստանտինոպոլի զօրաբաժինը և Կասսաբինի դաշտային արտիլերիան: Լուսաբացին այդ զօրքերը ճանապարհ ընկան և առաւօտեան 10 ժամին հասան Տելե-Կերիի մօտ: Արտիլերիան անյապաղ կրակ բաց իրաւ: Երկու ժամից յետոյ գրեւորներին և շտաբայիններին երկու բատալիօններ յարձակվեցան եգիպտական բանակի վրա և շատ զերիներ վերցրին: Անպատելի կերպով այդ յարձակմանը ենթարկված և իրանց օֆիցերներէն թողված այդ զօրքերը փախան և մինչև անգամ չը փորձեցին պաշտպանվել: Զրանցքի միւս կողմը երկաթուղու գծի վրա զիրք բռնած անգլիական արտիլերիան սկսեց ռումբեր արձակել արաբական զիւղի և եգիպտական բանակի վրա, մինչդեռ գեներալ Գրեմի զօրաբաժինը մօտենում էր թշնամուն: Երբ անգլիական արտիլերիան լռեցրեց եգիպտական թնդանօթներին, անգլիական երեք բատալիօններ անցան ջրանցքից և վերցրին թշնամու ամրացած դիրքերը: Երկու կողմից էլ թշնամով շրջապատված եգիպտացիները ստիպված էին անձնատուր լինել: Անգլիացիները 2,000 զերիներ վերցրին: Անգլիական հեծելազօրքը հալածում է թշնամուն: Եգիպտացիք յետ են քաշվում դէպի Զազալիգ: Իզմիլիյիս հասած հնգական երեք զուգորդ պահպանում են Նեֆիշի և Է-Մագիտի գիծը: Մի ուրիշ զուգորդ Արաբի-փաշայի մէջն է: Հինգական հեծելազօրքը շտապով ուղարկված է Տելե-Կերի: Ամրացած բանակը մի փոքր բարձրադիրքի վրա էր կազմած պրտադատու դաշտի վրա Ուէլսի մէջ տեղը: Տելե-Կերի լաւ չէր ամրացած և պաշտպանվում էր դաշտային թնդանօթներով: Արաբները այնպէս շփոթված էին անգլիական զօրքերի յանկարծակի վրա հասնելուց, որ նրանցից շատերը փախան առանց հրացան արձակելու: Հաւատարմութեամբ են, որ անգլիացիները սպանվածներով և վիրաւորվածներով կորցրին 1,500 մարդիկ: Բացի այդ 300 զինուորներ էլ անցյալ տեղ են:

Անգլիացիների վերցրած զերիների թուումն են Բուշի-փաշա և Զուլֆիկար-բէյ: Մահ-Մամի-փաշայի շտաբի կառավարիչ Իզմիլ-բէյ նայնպէս գերի է վերցրած: Տելե-Կերի վերցնելը յոյս է տալիս, որ արշաւաձեռը շուտով կը վերջանայ: Անգլիական զօրքերը անյապաղ կուղեւորվեն դէպի Կայի-րէ: Հնդկական հինգ զուգորդ պէտք է գրաւեն Զազալիգ և երկաթուղու գիծը: Կատարայի շրջականերում անգլիացիները նկատել են 3000 հեծեալ բեղուններին: Կայի-րէի մէջ կատարեալ անիշխանութիւն է տիրում: Ամեն զիւղի Արաբի-փաշայի կողմակիցները հրաւիրում են ամբոխին զինաւորվել և ընդիմադրել գետուրներին: Բնակիչներից Արաբի-փաշա մեծ սուրբեր է վերցնում: Այդ բռնակալ միջոցների գործադրութեան շնորհիւ Վերին եգիպտոսի մէջ ապստամբութիւն է ծագել: Սոխադի մուգիրը փչացրել է երկաթուղին: Խարտում մի նահանգապետը յայտնեց, որ ինքը ընդգէմ է Արաբի-փաշային և խեղդի կողմն է անցնում:

ՆԱՄԱԿ ԱՒՏՈՐԻՍՏԻՑ

Վիեննա, 18/30 օգոստ.

Լօնդոնից յարգելի պ. Նաւասարդեանի «Մը-շախ» լրագրի միջոցաւ խնդրած Անոյ հաւաքածուն, պատիւ ունեմ յայտնել մեծարելի խմբագրութեանը, որ իր ժամանակին վաղ յանձնվեցաւ փոստային, մէկ ամիս առաջ երբ պարտքը նախկին ինձ հարցրեց թէ հաւաքածուն ինչի համար ուղարկում և ուղանում եմ, ես պատասխանեցի յարգելի պարտքի ներդրութիւն յանձն առնել ծանուցադրով դիմել Լօնդոնի փոստայի վարչութեան և անմիջապէս կը ստանայ, որովհետեւ հաւաքածուն մինչ այն օր չառ վաղուց ուղարկված էր և քանիցս այս խօսքը կրկնեցի անփութելի ապացոյց բերելով փոստայից առնված անդորարկը, որը առաջարկեցի պարտքին իրան ունենալ, եթէ պէտք չգտնէ: Ես իմ պարտքս մինչ իր սահմանը կատարած լինելով, այնուհետեւ որքան էլ փափագելի հաւաքածուն փութով պարտքին ձեռքը հասցնելու, այսու հանդերձ կարող չեմ միջադաշին փոստային վրա ազդեցութիւն ունենալ, կամ փոստի պաշտօնականներին հետ ես եւ ընկերակցել մինչ Լօնդոն, մինչ պ. Նաւասարդեանի տունը, որպէս զի ուշանալու անտեղութիւնը չը ծագէ: Զարգելի պարտքը փոխանակ ցոյց տուածս գործնական միջոցը կատարել ջանալու, վերադառնալ մանկերով ձեռք և ինձ է դիմում, հաւաքածուն է պահանջում, առիթ տալով «Մշախ» 141 համարի գրվածին: Ինչ և ինչ է մտի առնելով դիւրագոյց պարտքին, այս անպատեհութիւնից առաջ գալիք օր և է անխտրժ կացութեան իր բարեկամ անգլիացիների քով, որոց համար հաւաքածուն ուղարկված էր, ստիպվեցաւ, բուրբուլին պարտքս դուրս մի այլ հաւաքածուն եւ ուղարկել, որպէս զի պարտքի հայկական պատուասիրութիւնը խնամված լինի պատուաւիրելի անգլիացոյ քով: Գոհ եղաց, վերջապէս, երբ 11 օր առաջ պարտքից ստացածս նամակաւ տեղեկացայ, որ երկու հաւաքածուները միմանց ետեւից ստացել է: Առաջին հաւաքածուն, յարգելի պարտքը դուրս է պատկած և եղել անգլիական փոստատուներ, պատճառ բերելով ծրարի վրա հասցելի տան թուահամարը գրված չը լինելուն: Այդպէս չէ, այլ, երբեք, ծրարը ուրիշ ծրարների հետ չի վիճել ճանապարհին, թուահամարը կտրվել է, անընթեռնելի լինելու շփոթով, առաւել հաւանականը պարտքին նախկին տունը փոխած լինելը ենթադրել է:

Առաջի կաղաչելի սեծարելի խմբագրութեանը, որ հաճէ՛ք հրատարակել այս երկազը ի հերքում 141 համարաւ «Մշախ» մէջ տպվածին, որին պ. Նաւասարդեանը անհամբերութեամբ տեղի տված էր, որ իբր հաւաքածուն չէ ուղարկվել:

Արդարեւ անխորժ թուեցաւ ինձ, որ ձեր զեծուր և ծանր զբաղմանց մէջ ձեզ աւելորդ զբաղացաւ պատճառեցիք, բայց կարծեցեալ պարտազանցութիւնը հերքելու համար ստիպողական հարկը ձեզ դիմել տուաւ, այս մասին ձեր ազնիւ ներողամտութիւնը խնդրելով կաղաչեմ, որ ընդունել անկեղծ յարգանքաց հաւատարմութիւն:

Յ. Քիւրքեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Daily Chronicle» լրագրին Պորտ-Սայդից հեռագրում են, որ Արաբի-փաշայն ութ օրով զինաւորաւ խնդրեց, բայց Ուէլսէյ մերժեց նրա խնդրքը և առաջարկեց մի օրով դադարեցնել պատերազմական գործողութիւնները:

— Վ. Պօլսից լրագրին Նաւագրում են օգոստոսի 16-ին: Ասում են, որ պատերազմական դաշնակիւրը այն ժամանակ կը ստորագրվի, երբ Արաբի-փաշային ապստամբ յայտնելու խնդրքը կը պարզվի և երբ կը վերջանան այն անհամաձայնութիւնները, որոնք ծագեցան կալանաւորված բանւորների առիթով, որոնց վարձել էին անգլիացիները:

— «Times» լրագրին Կալկուտայից հեռագրում են օգոստոսի 18-ից, որ Մալմուտ (Մադրասի նախագահութեան մէջ) կրօնական բնաւորութիւն, ունեցող ծանր անկարգութիւններ պատահեցան ինդուսների և մահմետականների մէջ, որի ժամանակ ինդուսները շատ խստապրտ կերպով վարվեցան. 150 մարդիկ բանտարկված են:

— «Times» լրագրին Բերլինից հեռագրում են օգոստոսի 23-ից, որ թիւրքաց կառավարութիւնը խնդրեց պետութիւններին դուրս գնել իրանց բարի ազդեցութիւնը որպէս միջնորդներ Անգլիայի և Բ. Գրան մէջ, բայց պետութիւնները քաղաքականութեամբ հրաժարվեցին բաւականացնել այդ ցանկութեանը:

— Լրագրներին արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Նեղոսի ջուրը այնպէս չէ բարձրացել, ինչպէս անցեալ տարի էր: Արաբները Գամիէտում վեց շաբաթ է որ բանտարկված են պահում ջուրը երթապայքներին, որոնց թոււմ և երկու քահանաներին, որոնց ամեն կերպ տանջում և վիրաւորում են:

— Անգլիական թղթակիցներից մէկը միջոց է ունեցել խօսել Լէսկայի հետ, որը յամառութեամբ պաշտպանում է եգիպտական ազգային կուսակցութիւնը և Արաբի-փաշային մեծ ազդասէր է համարում, ասելով թէ նա չառ նպատեց այն բանին, որ զսպի Ֆրանսիային մասնակցելու այն արշաւանքին, որի հետեւանքները միջոցաւ կան արշաւանքից աւելի կորստաբեր կը լինէին: Պ. Լէսկայ կարծում է, որ անգլիական արշաւանքը երկարատեւ կը լինի, որ անգլիացիները ամեն տեղ յամառ ընդդիմադրութեան կը հանդիպեն, որ նրանք մեծ դժուարութեամբ կայրել կը հասնեն, և աւելի եւս դժուարութեամբ կը նուաճեն եգիպտոսը:

— Երկու աշխատում է եգիպտական ամենափորձված և ամենատաղանդաւոր պետական մարդկանցից մէկ մինիստրութիւն կազմել: Շէրիֆ-փաշա համաձայնվեց ընդունել մինիստր-նախագահի պաշտօնը, իսկ Բիադ-փաշա ընդունեց ներքին գործերի մինիստրի պարտքը: Գեռ ևս յայտնի չէ, թէ արդեւ Նուբար-փաշան եւ կը համաձայնվի մտնել մինիստրութեան մէջ, որը, եգիպտոսի հետ լաւ ծանօթ անձինքների կարծիքով, շատ բարձր է իր բոլոր հարեանակիցներից:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 օգոստոսի: «Правит. Вѣсти.» լրագրից հաղորդում է. Բարձրագոյն հրաման արվեցաւ ուլանների և զուսարների զուգորդից զրադունների գունդերը դարձնելու մասին, որոնք այսուհետեւ թուով 46 կը լինեն: Մայօրի աստիճանը հեծեալազօրքի մէջ ոչնչացվում է: Գրաւ գունդների կապիտանները շտաբ-կապիտանները և պրապորշիկները այսուհետեւ կտնուանվեն բոսմիստրներ, շտաբ-բոսմիստրներ և կօրնեաներ: Պետական կայքերի մինիստրը մտադրի է այցելել Ռուսիան այգեպանութեան ուսումնարանը, Նիկիտեան այգին, գինեգործութեան Մագարաի ուսումնարանը և Եւլայի մէջ անտառային կուլտուրներ, Վերիկո-Անդոլի անտառային տուութեան, Եկատերինսկայի նահանգի մէջ: Ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկում է մինիստրների մասնաժողովին մերժել Տիւրքի գնամտով խնդրեցը գիւղական հասարակութիւնների վճար համեմատ

գաւառական գնամտների պահանջներից պարտքեր տալու մասին, քննութեան կատարման օրէնքը միայն առանձին դէպքերում գործադրելով: «Новости» լրագրից հաղորդում է, որ բոլորական պատերազմական մինիստրի խնդրի համեմատ գվարդիայի երեք օֆիցերներին թող է տուած բոլորական ծառայութիւնը մտնել Բոլղարիայի մէջ երեք էակազօններ կազմելու և վարժեցնելու համար:

ԲԻԳԱ, 26 օգոստոսի: Երէկ ուղեւորվեցաւ Ս. Պետերբուրգ սենատոր Մանսէյին:

ՆԻՓՆԻ-ՆՈՎՂՈՐՈՒ, 26 օգոստոսի: Գանդատի առաջարկված պարտամուրհակների թիւը տօնավաճառում աննշան է. վոյսկօ-կամնի բանին մէջ եղած 2,300,000 ռ. պարտամուրհակներից գանդատի են առաջարկված միայն 9,300 ռ. գումարի:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՐԳ, 26 օգոստոսի: Այսօր ուղարկված է 167 պուգ Ուրալեան ոսկի, որի մօտաւորական գինը 2,161,000 ռ. է: Մինչև օգոստոս Ուրալի վրա 255 պուգ ոսկի է մաքրված:

ՄՈՍԿՎԱ, 26 օգոստոսի: Միտրօպօլիտ Խոնիկի կը հասնի օգոստոսի 30-ին:

ԲԵՐԵՍԼԱՎԼ, 26 օգոստոսի: Կայսր Վիլհելմը հանդիսաւոր ընդունելութեան ժամանակ ամենից առաջ զրկեց և համբուրց Մեծ Իշխան Վադիմը Ալեքսանդրովիչին:

ՐՈՒՇԵՆԻՅԱ, 26 օգոստոսի: Տիկին Գօլովինա հիմնում է ուսաց ամսագիր «Родота» վերնագրով:

ՎՊՎ, 26 օգոստոսի: Այսօր լեհական լրագրները բաւական են Սիմբատովիչի հրաժարականից:

Կ. ՊՈԼԻՍ, 26 օգոստոսի: Այսօր հրատարակված է շրջաբերականը, որով Արաբի-փաշա ապստամբ է յայտնվում:

ՎԻԵՆՆԱ, 26 օգոստոսի: «Neue Freie Presse» լրագրին հաղորդում են Լօնդոնից, որ անգլո-թիւրքական դաշնակիւրը ստորագրված է: 5,000 թիւրքեր անյապաղ եգիպտոս կուղեւորվեն: Կալանաւորված են սօցիալական կուսակցութեանը պատկանող 26 բանւորներ:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՍ, 26 օգոստոսի: Տելե-Կերիի տակ Արաբի-փաշա 75,000 զօրք ունի: ԿԱՅԻՐԷ, 26 օգոստոսի: Եգիպտական 6,000 զօրքերի թուումն են գերմանական չորս և իտալական մի օֆիցեր:

ՄԻՋԱԶԳՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 օգոստոսի: «Русск. Писания» լրագրից հաղորդում է, որ ուլանների գունդերից զրադունների գունդեր են կազմված: «Новости» լրագրից լսել է, որ ենթադրված է արհեստական ճանապարհով ջրել Բագուի նահանգը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 94 ռ. 75 կ., երկրորդ 90 ռ. 62 1/2 կ., երրորդ 90 ռ. 62 1/2 կ., չորրորդ 90 ռ. 50 կ., հինգերորդ 89 ռ. 87 1/2 կ.: Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 214 ռ. 75 կ., երկրորդ 211 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 89 ռ. 25 1/2 կ., երկրորդ 89 ռ. 25 կ., երրորդ 89 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 22 կ.: Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 24 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 204 մարկ 87 պֆ., ֆարդի վրա 252 ֆրանկ 50 սանտիմ: Բօրայի տրամադրութիւնը թող է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԴՈՒՆԻ

**Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԽԱՆՈՒԹՈՒՄ**

ԼԷՕՆԻԴ ՅԵՕԴՕՐՕՎ Ի Զ
ԿՆԻՆԱ Հասաւ Ս. ՊԵՏԵՐ-
ՔՈՒՐԳԻՑ Թիֆլիսի երաժշտական ու-
սումնարանի հրաւերով և յայտնում է, որ
բացի իր պարապմունքներից ուսումնարա-
նի մէջ նա մասնաւոր ԴԱՍԵՐ կը տալ
պիանոի վրա ածելու համար թէ իր ՏԱ-
ՆԸ և թէ տանից ԴՈՒՐՍ: Ընդունում
է սկսող երեխաներին, նոյնպէս և ԲԱՐ-
ՋԸՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ համար: Պայման-
ների մասին կարելի է նրա հետ խօսել ա-
մեն օր 1—3 ժամը Թիֆլիսի երաժշտական
ուսումնարանի մէջ: ԳՐԻԲՕԵԴՕՎ Ս.
ԿԱՅԱ փողոց (նախկին Կամենդատսկայա)
տուն ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՍՕՎ Ի № 6:
(ե. հ. չ.) 6—12

Бенке.	<i>Руководство къ воспитанію.</i> Переводъ съ послѣдняго нѣмецкаго изданія подъ редакціею Весселя. Спб. ц. 2 р. 75 к.
Бэнь.	<i>Психологія.</i> Переводъ съ англійскаго. Спб. ц. 2 р. 90 к.
Вундтъ.	<i>Основанія фیزیологической психологіи.</i> Дополнено по новѣйшимъ изданіямъ. 2 ч. М. ц. 7 р.
Джевонсъ.	<i>Основанія логики.</i> Пер. съ англійскаго языка. Спб. ц. 70 к.
Евстафьевъ.	<i>Начальныя основанія педагогики и дидактики.</i> Вып. 1-й Спб. ц. 60 к.
Ельницкій.	<i>Курсъ дидактики.</i> Пособіе для учебныхъ заведеній, въ которыхъ преподается педагогика. Спб. ц. 90 к.
Ельницкій.	<i>Методика начальнаго обученія отечественному языку.</i> Спб. ц. 90 к.
—	<i>Педагогика.</i> Спб. ц. 83 к.
Амось Коменскій.	<i>Великая дидактика.</i> Спб. ц. 3 р. 45 к.
Корфъ.	<i>Наша педагогическіе вопросы.</i> М. ц. 2 р. 60 к.
Струве.	<i>Элементарная логика.</i> Варш. ц. 1 р. 15 к.
Спенсеръ.	Воспитаніе умственное, нравственное и физическое. Спб. ц. 1 р.
—	<i>Основанія психологіи.</i> Съ приложеніемъ статьи. Сравнительная психологія человѣка. Спб. 4 т. ц. 8 р.
Тайлоръ.	<i>Антропологія</i> съ 78 рисунками въ текстъ. Спб. ц. 3 р. 50 к.
Новиль.	<i>Логика гипотезы.</i> Спб. ц. 1 р. 75 к.
Ушинскій.	<i>Человѣкъ какъ предметъ воспитанія.</i> Опытъ педагогической антропологіи 2 т. Спб. ц. 5 р. 20 к.
Фонъ Раумеръ.	<i>Исторія воспитанія и ученія</i> отъ возрожденія классицизма до нашего времени въ 2 частяхъ. Спб. ц. 5 р. 60 к.
Шмидтъ.	<i>Исторія педагогики,</i> изложенная во всемірно-историческомъ развитіи и въ органической связи съ культурною жизнью народовъ. Изд. 3-е дополненное и исправленное Ланге: т. I <i>Исторія педагогики до христіанской эры</i> ц. 4 р. 60 к.; т. II <i>Отъ Христа до реформачіи</i> , ц. 4 р. т. III <i>Отъ Лютера до Песталоцци</i> , ц. 6 р. 35 к. т. IV ч. I <i>Христіанское гуманное воспитаніе</i> ц. 4 р. т. IV ч. II <i>Германія и ея школы</i> ц. 4 р. Цѣна всѣмъ пяти книгамъ 22 р. 95 к.
Шутце.	<i>Училищевѣденіе.</i> Практическое ученіе о воспитаніи и обученіи для семинарій и учителей народныхъ школъ. Главно- ц. 1 р. 75 к.

4-5

32—100

ՕՐԵՍՍԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Թղլլաւթեամբ Կ. Կ.
 ԲՈՒՆԻ ԷՅԿԱԼԻՊՏԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԷԿԿԻՐ շատ լաւ միջոց է առամ-
 ների և ընդերքների ցաւի զեմ, նոյնպէս և ցաւի առաջն առնող միջոց:
 Ատամնային ԱՌՈՂՎԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՇԻՆԵՐ Կարմիր, սպիտակ և
 սև խնայի:
 ԷՅԿԱԼԻՊՏԻՆ մաքրող ՀԵՂՈՒԿ սենեակների և հիւանդների բնակա-
 րանները մաքրելու համար և այլն և այլն:
 Ամբողջ Կովկասի համար գլխաւոր պահեստ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆԲՆԵ-
 ՐԻ ԱՌԵԻՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹ ԹԻՖ-
 ԼԻՍԻ ՄԷ (Кавказское товарищество торговли аптекарскими товарами въ
 Тифлисе.
 (Գ. և Զ.) 1—4

(г. 4 г.) 1—4

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

በ ከ ሀ በ ከ ሆ ን ሄ ሶ ሄ ን

ՊՐՕԳՆԱԶԻԱԿԱՆ ԿՈՒՐՍՈՎ

(Վէլիամինեան փողոց, իշխան Ամատունու տանը)

Բացվում են I և II պրոդիմադրական դասասներ պանսիոնոյ: Ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսմունքը սեպտեմբերի մէկից: Դասատուութեան համար հրուիր վաճ են բացառապէս ԳԻՄՆԱԶՅՈՒՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ:

6-8

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

L' O R I E N T A L

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Ժողովրդական» լրագրողի հին բաժանորդներին զաղարեցրած թերթի սեղ հոգաբարձիի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարւանք 4 ռուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱՍԻ“ խմբագրությունն մէջ, կամ ուղղակի վիճենայում չիմե-
լով Հետեայ Հասարակ Հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մ ի ջ ի փ ո ղ ո ճ, Կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ճ ի ա ն կ ի լ ն Ն 13

Աւելի էժամա, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԷ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, Ֆրանսիական և անգլիական երկաթէ կԻՍԱՎԱՅՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակօթյաթներ 1. 30—12 ր., սոսու գոսկներ ճամադարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամո գորներ 60 ր.—1.25 ֆունտա, կուխոնների պղնձ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումի վայնի կներ մրամորնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուսնի 6—32 ր., ուղղովներն ամենայն տեսակ 3. 50—36 ր., պատոններ. (գուլաններ) բեֆօլբեր, սիգար Ռենդարդի ֆարբիկեց պատկերոս և թամարթու կուշարովի գիրգի պատկերով. 5,000 ՊՈՒՆՏ ԹԵՃ (շայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկուր. (սուխար չայու և կաֆէի) 1.խեմի. կօֆէ 1.խեմի և Միխէլսնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 ֆ. հայկիկներ ամենայն տեսակ 28 ֆ.—240 ր., պրորկայ զինվածառների, հանքայն և գարեջրի (ДЯЯ заводскихъ водъ и пива) դուլթու (пучкъ), պաղնոսնի սամովարի և չայու, դանակ չանդով դանադան ֆարրիկաների 1 ր. 20 ֆ.—25 ր. դուսինը. դրշարթներ 1 ր. 80 ֆ.—5—60 ֆ. դանակ ջրի 1—60 ֆ.—12 ր., դանակ հացի 20 ֆ.—1 ր., հատր, կուխոնի 1—40 ֆինչ 3—20 ֆ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոններ, Բրիտանիկ չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլար—Չուր մարկուր, կրամայ կարօկէն 18 ֆ, վաքս Ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշի, անկերտոներ, սուրբուշ, մառտա, գրիշ երկաթէ, գրչակոթ, քարտախաակ, թանաք, թանաքամաններ, պրեսպակներ, գդանիք սեղանի և չայու ֆրաթէ, վարշավի և բրիտանիկ դուսինը 1—50 ֆ. մինչև 12 ր., և չայու 45 ֆ.—5 ր., չուլան, պղնձադշկաներ վարշավ, Ռեձլնի կԱՄՈՇՆԵՐ, ամեն տեսակ, դուքաններ կանանց և մարդկերանց 15 ֆ.—50 ֆ. ջուլան, չապիկներ, մարդկերանց գալուստիներ, գանդիկներ 35 ֆ.—4—50 ֆ., հատ, անձրիկ և շաքի. սանդղեր շերմայու ոսկորէ, գուտապերշովի և փայտէ, չշտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլի թէլ (бумага) մատիկի կօշի և շալէ (парусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քրտաներ, պապիկներ ամաններ և մանր գորտաներիցին ապրանքներ, սպան ամեն տեսակ 3 ֆ.—30 ֆ., կտոր, հոտապէտ ջրեր, պուրքա, գլիցիլին ջրի քաղախ, հոտապէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՐՈՍԵՆԱՅԷ պահեստում. (ВЪ Складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաբաղադրացիք կարող են դիմել հետևեալ հասցեով. Тифлисъ Ми-
хайлу Н. Теръ-Никогосову.

124—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո ճ, Կ ա Թ օ լ ի չ Է ս Կ ա յ ա փ ո ղ ո ճ Ի ա ն Կ Ի ւ ն № 13